ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում մեծ շուքով նշվեց Սրբոց Թարգմանչաց տոնը: Աննախադեպ խանդավառություն էր տիրում ճեմարանականների շրջանում, քանզի վերջին տասնամյակում առաջին անգամ էր հավուր պատշաճի նշվում նվիրական այս տոնը: Այն պատգամում էր ճեմարանականներին՝ սիրելու ոսկեղենիկ մեր Մայրենի լեզուն՝ վերջինիս միջոցով ամուր կառչելով մեր երանելի նախնիների աներեր հավատքին՝ հավատարիմ մնալով նրանց թողած հսկայական ժառանգությանն ու ավանդին:

Միջոցառումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին դիմեց միջոցառման կազմակերպիչ, ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ տիկին Գրետա Անդրեասյանը: Նա անդրադարձավ գրերի գյուտի ստեղծման պատմությանը, Ս. Թարգմանիչների սխրանքին, հայոց լեզվի անաղարտության պահպանման կարևորությանը:

Հանդիսության ժամանակ ճեմարանականները մեջբերեցին հայ և օտար հեղինակների ասույթները հայոց լեզվի մասին՝ Հնդկաստանի հյուրընկալ հողում մեկ անգամ ևս հնչեցնելով քաղցրաբարբառ մեր լեզուն: Հանդիսությունն ընդմիջարկվում էր ճեմարանի երգչախմբի ելույթներով՝ գլխավորությամբ երաժշտության ուսուցիչ Վաչագան Թադևոսյանի:

Հանդիսության ավարտին եզրափակիչ խոսքով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Նա շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ ուրախությանբ նշելով, որ 185-ամյա կրթական հաստատության մեջ վերականգնվում են նախկին բարի ավանդույթները:

Հանդիսությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամներ, Շվեդիայից ժամանած նախկին ճեմարանականներ, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՃԵՄԱՐԱՆԻ 185-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 9-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հոբելյանական տոնակատարությունների շրջանակում տեղի ունեցավ հերթական գրական-գեղարվեստական ցերեկույթը, որը կազմակերպել էր ճեմարանի անգլերեն լեզվի երկարամյա ուսուցիչ Բրիտա Ռոյը: Բեմ ելած ամեն մի ճեմարանական փորձում էր յուրովսանն ցույց տալ իր հմտությունները՝ արժանանալով ներկաների ծափողջույններին:

Միջոցառման ընթացքում առաջին դասարանցիները ներկայացրեցին անգլերեն լեզվով պատրաստած իրենց փոքրիկ ծրագիրը, որից հետո ասմունքեցին ութերորդ դասարանցիներ Երանուհի Առաքելյանը և Կարեն Մկրտչյանը:

Հատկապես հետաքրքրական էին ճեմարանականների կողմից Շեքսպիրի «Հուլիոս կեսար» և ճեմարանի ուսուցչուհի Բրիտա Ռոյի հեղինակած «Բժշկումը» վերտառությամբ թատերական ներկայացումները:

Հանդիսության վերջում եզրափակիչ խոսքով հանդես եկավ Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հայր Սուրբը նախ շնորհակալություն հայտնեց Բրիտա Ռոյին, որ արդեն տասնամյակներ շարունակ իր անմնացորդ ծառայությունն է բերում Մարդասիրական ճեմարանին, ապա ի մասնավորի ասաց. «Այս գեղեցիկ միջոցառումը և հատկապես դերասանական ձեր հմտությունները ևս մեկ անգամ փաստում են, որ բազմաթիվ շնորհալի երեխաներ կան ձեր մեջ, ուստի ամեն ինչ պետք է անել՝ Տիրոջ կողմից մեզ տրված շնորհները ճիշտ և տեղին օգտագործելու համար: Երբեք չպետք է մոռանաք, որ 185-ամյա պատմական կրթական հաստատության սաներն եք ամենքդ, որ ձեր ուսերի վրա կրում եք պատասխանատվություն և պարտականություն՝ բարձր պահելու համար Մարդասիրական ճեմարանի անունը՝ ի կատար ածելով նրա երախտարժան բարերարների կտակը»,- նշեց Հայր Սուրբն իր խոսքում:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 185-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Նոյեմբերի 10-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում կրկին տոնախմբություն էր: Ճեմարանի հանդիսությունների սրահում պատմական կրթօջախի 185-ամյակի տոնակատարությունների շրջանակում տեղի ունեցավ գլխավոր միջոցառումը, որն սկսվեց Տերունական աղոթքով և Հնդկաստանի ու Հայաստանի օրհներգերով: Այնուհետև ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը ճեմարանի հիմնադրման առիթով:

Բարիգալստյան խոսքով հանդես եկավ ճեմարանի տնօրեն տիար Ջեյմս Դայասը: Նա շնորհավորեց ամենքին հոբելյանի կապակցությամբ՝ անդրադառնալով ճեմարանի վերջին մեկ տարվա բուռն և նպատակասլաց գործունեությանը: Տնօրենը նաև իր ուրախությունը հայտնեց, որ հոբելյանական միջոցառմանը մասնակցում է նաև Արևմտյան Բենգալիայի նահանգապետ տիար Գոպալկրիշնա Գանդին՝ վերջինիս հրավիրելով իր սրտի խոսքն ուղղելու ներկաներին: Նահանգապետն ընդգծեց, որ թե՛ հնդիկ և թե՛ հայ ժողովուրդները հին քաղաքակրթություն ունեցող ազգեր են և պատմականորեն միշտ էլ սերտ կապերի մեջ են եղել, և ուր էլ եղել է հայ մարդը, պատիվ է բերել այդ երկրին, որի ակնհայտ վկայությունն են Հայոց Եկեղեցին և հայոց Մարդասիրական ճեմարանը: Տիար Գոպալկրիշնա Գանդին շնորհավորեց նաև ճեմարանի 185-ամյակի կապակցությամբ՝ հաջողություններ մաղթելով ճեմարանի ղեկավարությանն ու ճեմարանականներին: